Անի Ղազարյան
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող,բանասիրական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ arpinanyan21@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.2-229

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հ. Թումանյանի չափածո ստեղծագործություններում (**պոեմ, լեգենդ, բալլադ և այլն**) առկա երգիծանքի առանձնահատկություններին և բանաստեղծի կիրառած գեղարվեստական այն հնարքներին, ուր երևակայականի ու իրականի միաձուլմամբ հստակ արտահայտվում են հեղինակի արդարացված զայրույթը և ինքնաձաղկումը:

Հոդվածի նպատակը այդ երկերի և գրողի պատկերամտածողության վերլուծությամբ կերպարների հոգեբանական նկարագրի լիարժեք բացահայտումն է, իսկ խնդիրը՝ երգիծական ստեղծագործությունների ժանրային պատկանելությունը: Մեր քննության առարկան չափածո երգիծական ստեղծագործություններն են, իսկ մեթոդը՝ համեմատական և կառուցվածքային վերլուծությունը, որոնց օգնությամբ միաժամանակ համեմատության եզրեր և զուգահեռներ ենք անցկացրել: Համեմատական տիպաբանության վերլուծության միջոցով ցույց ենք տվել թումանյանական երգիծանքի առանձնահատոկությունները՝ ի հայտ բերելով հեղինակի բացառիկ անհատականությունը: Գիտական նորույթը բանաստեղծի կիրառած երգիծական հնարքների և չարի ու բարու հակադրության վերհանումն է:

Հիմնաբառեր. բանաստեղծ, պատկեր, չափածո, բալլադ, երևակայական թռիչք, ճշմարիտ ստեղծագործող, կյանքի ճշմարտություն, ստեղծագործական աշխատանք:

Ներածություն

Հ. Թումանյանն իբրև բանաստեղծ և խորհող անձ, իր մտքի թռիչքներում բացառիկ անհատականություն է, ինչը նրա հայտնության առեղծվածի գաղտնիքներից է: Ստեղծագործական թռիչքի պահերին բանաստեղծի առջև բացվում են նորանոր ճանապարհներ ու հորիզոններ, անծայր և անհայտ հեռուներ, որոնց շնորհիվ նրա իմաստուն և կշռադատված խոսքը հասցեագրվում է ոչ միայն իր ժամանակակիցներին, այլև հետագա սերունդներին: Ասվածի վկայությունն է նաև այն, որ չափածո ստեղծագործություններում, ինչպես արձակում, նույնպես հստակ ուրվագծվում են բանաստեղծի անթաքույց սերն ու անսահման բարությունն աշխարհի և մարդ արարածի հանդեպ, որից հետո նրա մտքի սևեռումները տալիս են նրան օրնիբուն հուզող ու մտահոգող բոլոր հարցերի հստակ և սպառիչ պատասխանները: Նա իրեն բնորոշ բանաստեղծական նուրբ զգացողությամբ և վարպետությամբ է ալեկոծվող ու փոթորկվող հոգու տվայտանքները վերածում բանաստեղծական անկրկնելի տողերի, որոնք մաքրամաքուր, պարզ ու անկեղծ խոստովանություններ են և ինքնամաքրման աղոթքի պես են արձագանքվում ընթերցողի հոգում:

Թումանյանի չափազանց հիմնավոր տագնապներում օրինաչափորեն խախտվում է մարդու ճակատագրի հանդեպ առկա քարացած լռությունը, որից հետո իրապես դժվար է բանաստեղծին տարանջատել իր ստեղծագործություններից, որովհետև նրա ամենօրյա մտածումները, խոհերն ու ապրումները լուսավոր մտքի ասելիքի են վերածվում: Միանգամայն իրավացի է Հ. Թումանյանը, երբ գրում է. *«Այո՛, գրականությունը հայելի չէ լոկ և եթե հայելի էլ ասենք, ապա շատ փարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ փվել է նրան ասված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր փարրերից»* (Թումանյան, 1995, էջ 32):

Իր իսկ ասած մարդու ցավը, տագնապները, ամենօրյա տառապանքներն արտահայտելու նպատակով բանաստեղծը կանխամտածված ներկայացնում է դրամատիկ պատկերներ և տեսարաններ, որոնք այնուհետև վարպետորեն ու աննկատ զուգակցում է ծիծաղաշարժ տեսարանների՝ հերոսի հոգեբանական վիճակը, առօրյա և անկարևոր գործերի դրամատիզմն ու սարկազմը սաստկացնելու նպատակով: Մարդ արարածն իր առօրյա ուրախություններով և վշտերով, ամենօրյա թերություններով ու չարի դեմ մղած պայքարի արդարացված և յուրահատուկ ձևերով առանձնահատուկ տեղ ունի նրա ստեղծագործություններում: Եթե նկատի ունենանք, որ գրականությունը մարդ արարածի ներաշխարհի գեղարվեստական վերարտադրումն է, միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու է Թումանյանի անբիծ ու անկաշառ հոգին անվերջ տառապում և փոթորկվում՝ տեսնելով իր դիմաց կանգնած խեղճ, անօգնական, անճարակ, իր շուրջբոլորը կատարվող տարատեսակ անարդարությունների հետ հաշտվել չկարողացող մարդուն, ով բնության անբաժանելի մասնիկն է, ցանկանում է լիովին ընկալել կյանքի իմաստն ու բովանդակությունը: Այն կյանքի, որում մարդը հալածանքների է ենթարկվում

անվերջ փոփոխվող ժամանակի անմարդկային ու անբարո բարքերի կողմից: Բարձր գնահատելով Թումանյանի ստեղծագործությունները, որոնք իրապես *«կազմում են հայ ժողովրդի կյանքը, նրա հույզերն ու մտքի թռիչքները»*, Ա. Ինաճիկյանը գրում է, որ ժողովրդին մեծագույն ստեղծագործող համարող Թումանյանը. *«բազմիցս նշել և իր լավագույն ստեղծագործություններով հաստատել է, որ իսկական ժողովրդական գրողը, հաստատ կանգնելով ռեալիզմի հողի վրա, ճշմարտացի պատկերելով ժողովրդի իրական կյանքը – «կարիքներն ու չարիքները», հարազատ թարգմանը հանդիսանալով նրա նվիրական իղձերի, դուրս է գալիս ազգային շրջանակներից, ստանում համամարդկային արժեք ու նշանակություն, որովհետև ժողովուրդներն իրենց հույզերով ու տենչերով հարազատ են իրար»* (Ինաճիկյան, 1967, էջ 242):

Կյանքի և իրականության գեղարվեստական վերարտադրումը թումանյանական չափածո խոսքում առանձնանում է ինքնատիպ լուծումներով և պատկերավորման յուրահատկությամբ: Նա գրչի նուրբ հարվածներով կերտում է պարզ, անմիջական, զգայուն և չափազանց իմաստալից ու խոսուն տեսարաններ՝ պատկերային մտածողությամբ վեր հանելով կյանքի իրական գծերը: Գրական հերոսների ընտրության հարցում բանաստեղծը ինքնատիպ նախասիրություն է ցուցաբերում, իսկ նրանց ներաշխարհի բացահայտման սեփական սկզբունքներն ու հոգեկան ապրումները վեր հանելու վարպետության շնորհիվ պարզորոշ ցուցադրում է իրականության հանդեպ իր ունեցած հստակ դիրքորոշումը: Նա իր հերոսների մեջ նրբանկատորեն խտացրել է ժամանակի ռիթմը՝ տարանջատելով մնայունն ու անցողիկը, հիմնականն ու երկրորդականը:

Թումանյանը սկզբից ևեթ ազգային բանաստեղծ էր, որովհետև նրա ճակատագիրը անչափ նման էր հարազատ ժողովրդի ճակատագրին: Այն չիրականացված բազում երազանքների ու ցանկությունների հանգրվան էր դարձել, սակայն նա դրանից չէր ընկճվում կամ հուսահատվում, ընդհակառակը, բացառիկ և անկոտրում կամքի շնորհիվ շարունակում էր անդադար ստեղծագործել՝ հավատալով հարազատ ժողովրդի վաղվա լուսավոր օրվան: Նա, իր խղճի ձայնին անսալով, ընկղմվում է իրական աշխարհի խորխորատները, այնտեղից լույս աշխարհ հանում իր հայտնաբերած անծանոթ ու հոգեբանական բարդ հյուսվածքները՝ ստեղծագործական անկրկնելի երևակայության օգնությամբ ասելիքն ընթերցողին հասանելի ու հասկանալի դարձնելու համար: Հանուն ճշմարտության հաղթանակի նա պատրաստ էր ցանկացած զոհողության և տարատեսակ փորձությունների դիմակայել՝ ժողովրդի ու հայրենիքի հանդեպ իր քաղաքացիական պարտքը կատարելու համար: *«Թումանյանի համար մարդը, իրեն ծնող բնության պես, մեծ ստեղծագործող է, խիզախ կատարումների հեղինակ: Մարդը անհունորեն հարուստ է, նրա ճակատի վրա դրոշմված է տիեզերքի վեհության կնիքը, նա իմաստության աղբյուր է, նա առատաձեռն է, հոգու լիությունից անսահմանորեն շռայլ: Թումանյանը պարզ տեսնում էր, թե որպիսի դժվարություններ կային մարդուն հատուկ կարողությունների բացահայտման ասպարեզում և, այնուամենայնիվ, հավատում էր մարդուն, ժողովրդին մարդկությանը»* (Սարգսյան,

1966, էջ 169),– գրում է Խ. Սարգսյանը: Հենց այդ անսասան հավատն էր նրա մեծության արգասիքը:

Տեսական հիմքեր

Հոդվածում կիրառվել են գրականության տեսաբանների և գրականագետների (Թամրազյան Հ., Ավետիսյան Ջ., Ջաքարյան Ա., Ջրբաշյան Էդ., Ինճիկյան Ա. և այլք) փաստարկված դրույթները, ինչպես նաև ուսումնասիրության մեջ կիրառվել են համեմատական և ուսումնասիրական մեթոդները:

Արդյունքներ

Հոդվածի հիմնական արդյունքները ներառում են Թումանյանի չափածո ստեղծագործությունների երգիծական այն դրսևորումները, որոնցով վեր են հանվել կյանքի միանգամայն ճշմարիտ տեսարանները, մարդկային զանազան բնավորությունները և այդ ամենը նրբանկատորեն ներկայացվել են նրբերանգներով:

Քննարկում

Թումանյանի խորիմաստ և արդարացված քննադատություն պարունակող չափածո ստեղծագործությունները հստակ կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում բանաստեղծն այլաբանորեն ներկայացնում է իրական կյանքի միանգամայն ճշմարիտ տեսարաններ, մարդկային տարատեսակ բնավորություններ, իրեն յուրահատուկ սկզբունքայնությամբ և արդարամտությամբ խստորեն դատապարտում է մարդկային հարաբերություններում առկա չարն ու կեղծիքը և ակնածանքով խոսում բարության մասին՝ հընթացս քարոզելով արդարություն, հավասարություն և այլն: Իսկ երկրորդ խմբում քննության է առնում մարդու և բնության փոխհարաբերությունները արդարության ու բնապաշտության դիրքերից, որովհետև բնապաշտությունն ու մարդապաշտությունը աշխարհըմբռնման միտում ունեն: Բնությունը բանաստեղծի հերոսներին հոգեհարազատ միջավայր է, որը նրան իրապես փրկում է մարդկային չար ու դաժան հալածանքներից՝ այդ եղանակով բնաշխարհը դարձնելով մարդասիրության և ազատության հանգրվան (**«Թագավորն ու չարչին», «Անբան կկուն», «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», «Ձախորդ Փանոսը»** և այլն): Խոսելով կենսական փաստի գեղարվեստորեն թումանյանական ներկայացման մասին՝ Ջ. Ավետիսյանը իրավացիորեն գրում է. *«Բանաստեղծի մտահղացման հենքը երբեք էլ եթերային չի եղել, նրա ամեն մի գործ, լինի բանաստեղծություն, պատմվածք, լեգենդ, թե պոեմ, ունեցել է կենսական աղբյուր: Թումանյանը մի զարմանալի ուժով կենսական ճշմարտությունը կարողանում է փարրալուծել գեղարվեստական երևակայության քուրայում՝ տալով նրան նոր ոգի, նոր շունչ ու իմաստ, նոր հնչեղություն»* (Ավետիսյան, 1973, էջ 72):

Ճշմարտություն է, որ Թումանյանը յուրովի տեսավ, ընկալեց ու չափածո ստեղծագործություններում մարմնավորեց մարդկանց ազգային ու սոցիա-

լական կյանքի խնդիրները: Նա բացառիկ վարպետությամբ է իրականացրել ցանկացած կերպարի բնութագրումը՝ ստեղծագործական երևակայության շնորհիվ մարդկային հարաբերությունների, մարդկանց արարքների, գործողությունների ու դեպքերի միաձույլ և ամբողջական շղթայում ճշմարտացիորեն վերարտադրելով իրականության պատկերը: Միանգամայն օրինաչափ է, որ բուն իրականության և բանաստեղծի կերտած գեղարվեստական իրականության միջև առկա տարբերությունը նկատելի է անգամ անզեն աչքով: Հավատացած և համոզված լինելով, որ կյանքում ցանկացած երևույթ իր բնական և օրինական ավարտն ունի, ոչինչ հավերժորեն չի կարող գոյատևել, նա հանգույցից հետո նրբանկատորեն սկսում է գործողության բնական և աստիճանական զարգացումը և այն վարպետորեն հասցնում ցանկալի վերջնակետին: Այդ ընթացքում, դիպաշարի զարգացմանը զուգահեռ, ներդաշնակորեն լուծվում է նաև ծնունդ առած հակադրությունը (**«Շունն ու կատուն», «Չարի վերջը», «Անիծված հարսը»**): Իսկ, քանի որ իրական կյանքը նաև հակադրությունների բնական պայքար և անզիջում մրցավազք է, սյուժեի զարգացումը տեղի է ունենում տեսանելի հակադրությունների հաղթահարման ճշմարիտ ուղիով: Իր նպատակին հետամուտ՝ Թումանյանը իր կերտած հերոսների միջոցով արտահայտում է սեփական լավատեսական պատկերացումները մարդու և հարափոփոխ կյանքի մասին, իսկ բացասական կերպարի միջոցով մերժում է այն ամենը, ինչն անհարիր է մարդու բարոյական ընկալմանը (**«Պոետն ու մուսան», «Թագավորն ու չարչին», «Մի կաթիլ մեղրը»**): Խոսելով թումանյանական վարպետության մասին՝ Ա. Զաքարյանը գրում է. *«Թումանյանի ստեղծագործության բանաստեղծականության գաղտնիքը այն է, որ ամեն անգամ իր հերոսների հոգին ու հոգեբանությունը բացելու համար կարողանում էր գտնել հոգևոր մարմնական ու առարկայական համարժեք գործունեություններ»* (Զաքարյան, 1981, էջ 65): Ուստի միանգամայն օրինաչափ է, որ բանաստեղծի սուր աչքից աննշան մանրուքն անգամ չի վրիպում: Նա կյանքն արդարամտորեն պատկերում է միանգամայն օբյեկտիվորեն՝ բացահայտելով իրական գծերն ու կերպարների հոգեբանությունը, ինչի շնորհիվ նրա ստեղծած լավագույն երկերը, ազգայինին զուգահեռ, համամարդկային մշակույթի անբաժանելի մաս են կազմում իրենց խորիմաստ բովանդակությամբ: Սրա մասին է վկայում նաև թումանյանական ճշմարտացի գնահատականը. *«Բանաստեղծը, որը իր հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, գլուխ թեկուզ մինչև երկինք հասնի»* (Թումանյան, 1995, էջ 396), ինչը փաստում է, որ ժողովրդին հոգեհարազատ ստեղծագործությունը մնայուն արժեք է:

Թեև **«Շունն ու կատուն»** (1886) բալլադի հիմքում ընկած է ժողովրդական զրույցը, սակայն Թումանյանն իրեն յուրահատուկ վարպետությամբ ու ակնհայտ երգիծանքով է ներկայացրել իրական կյանքի մի չափազանց ծիծաղաշարժ, ինչ-որ տեղ նաև զավեշտի հասնող պատմություն՝ անվերջ առկայծող հումորով և հեղինակին բնորոշ սրամտությամբ: Շան ու կատվի երգիծական պատմությունը պարզ ու հստակ ակնարկ է մարդկային հարա-

բերությունների մասին, ինչը կարող է հանկարծակի և անսպասելիորեն փչանալ կողմերից որևէ մեկի անխոհեմ կամ չկշռադատված անմիտ արարքի պատճառով: Կոշկակար կատվի ամենօրյա ոչնչով չարդրացվող ու բացահայտ խաբեության հասնող ստախոսությունն ի վերջո լցնում է գառան մորթի տված ու գդակ պատվիրած շան համբերության բաժակը *«Քանի՞, ախպեր, անգամ գընամ ու գամ...»* (Թումանյան, 2018, էջ 92): Միջադեպից հետո գդակի պատճառով սովորական լեզվակռիվը թեժանում է *«Էլ հին ու նո~ր, էլ հեր ու մեր//Էլ գող Փիսո~, էլ քաչալ Շո~ւն...//Բանը հասավ դիվանքաշուն»* (Թումանյան, 2018, էջ 93), աստիճանաբար սաստկանում և վերածվում արդեն անխուսափելի կռվի՝ դառնալով հավիտենական թշնամության պատճառ: Կենդանիների միջոցով նա փոխաբերությամբ մերկացնում է մարդկանց կենցաղային հարաբերություններն ու անազնվությունը՝ հստակ նշելով, որ նյութապաշտությունը թշնամանքի պատճառ կարող է դառնալ:

«Չարի վերջը» (1908) ստեղծագործության մեջ ակնհայտ է չարի և բարու միանգամայն տեսանելի և սուր հակադրությունը, որը վերջնարդյունքում ավարտվում է բարու հաղթանակով: Խորամանկ աղվեսը, որն ինքնագլուխ իրեն անտառի տեր ու տիրակալ էր հռչակել *«–Էս սարն իմն է,//Էս ծառն իմն է....//Էս ո՞վ է եկել// Տիրացել թաքուն»* (Թումանյան, 2018, էջ 143–144), չարամտորեն, ծառը կտրելու պատրվակով և խաբեությամբ տիրանում է կկվի երկու ձագերին: Դժվար է ասել, հերթական անգամ կկուն իր վերջին ձագին նույնպես կտար նրան, եթե պատահաբար չհայտնվեր ագռավը: Վերջինս, իմանալով կատարվածի մասին, զարմանում ու զայրանում է դժբախտացած թռչնի միամտության վրա, զայրույթը չի թաքցնում, բացում է կկվի աչքերը և աղվեսի հետ հաշվեհարդար տեսնելու հստակ ծրագիր է մշակում: Վերջնարդյունքում խորամանկ աղվեսն իր արդարացի պատիժը ստանում է, իսկ կկուն ազատվում նրանից: Այստեղ իմաստալից է ագռավի իմաստալից խոսքը. *«Սարն ամենքիս է հավասար»* (Թումանյան, 2018, էջ 145), ինչը միանշանակ նշանակում է, որ բնության բարիքները որևէ մեկի սեփականությունը չեն: Թումանյանի երգիծական ակնարկը միանգամայն հստակ ու հասկանալի է՝ բնության բարիքները հավասարապես պատկանում են բոլորին, ինչը նաև նշանակում է, որ կյանքում մարդիկ իրավահավասար են՝ անկախ սեռից, տարիքից ու դիրքից, ուստի ուժը կամ խաբեությունը բռնության գործիք չպետք է դառնան: Եթե ինչ-որ մեկն իրեն իրավունք վերապահի դրանք կիրառել թույլի կամ անօգնականի հանդեպ, համարժեք պատասխանը երբեք չի ուշանա, որովհետև բնության բարիքներից հավասարապես օգտվելու իրավունք ունեն այդ նույն բնության ծնունդ բոլոր էակները: Ժողովրդական առակը կոնֆլիկտի հիմք և սեփականության խնդիր համարելով՝ Թումանյանը դրան հակադրում է հավասարության գաղափարը:

«Անիծված հարսը» (1898) ստեղծագործությունում երիտասարդ և խելացի հարսը սկզբնական շրջանում համբերատարությամբ լսում է սկեսրոջ ամենօրյա ու անտեղի դժգոհությունները՝ կուլ տալով տարատեսակ վիրավորանքները: Ի վերջո նրա համբերության բաժակը լցվում է և այլևս չի կարողանում դիմանալ բանսարկու, չարախոս, չաչանակ և դաժան սկեսրոջ

հիմնազուրկ ու միանգամայն անմարդկային բանասարկություններին: Սեփական արժանապատվության հարգը գնահատող հարսը անեծքներից ու անմարդկային վերաբերմունքից փրկվելու համար մի ակնթարթում անսպասելիորեն կերպարանափոխվում է, դառնում թռչուն և սլանում բնության գիրկը՝ այնտեղ հանգիստ, երջանիկ ու հարատև կյանքով ապրելու երազանք իրականություն դարձնելու համար:

Նյութի մշակման ընթացքում հնի ու նորի միաձուլումը նրա բացառիկ մտածողության և ստեղծագործական վարպետության վկայությունն են, որովհետև նա այդպես կերտում էր իր անկրկնելի աշխարհը՝ հնի մեջ տեսնելով ժողովրդին հոգեհարազատ գեղեցկությունները, իսկ նորի մեջ խարազանելով արատները: Խոսելով Թումանյանի անկրկնելի արվեստի մասին՝ Հ. Թամրազյանն իրավացիորեն նկատում է, *«Թումանյանն ունի գեղարվեստական մտածողության գրեթե բոլոր տարրերը, օգտագործել է իր դարի տված բովանդակության և գաղափարների հնարավորությունները: Եթե այդ արվեստը համեմատելու լինենք բնության երևույթների հետ, կարող ենք ասել, որ դա կյանքի ու հոգու ծանրաբեռ, հուռթի, բերքառատ ամառ է, ավիշավորված, պտղավորված՝ հազար գեղեցիկ հնարավորություններով, դա հայկական հինավուրց հին-հին հեքիաթն է, խորունկ այն բանահյուսությունը, որը ինչ-որ էական բան է տվել մեր ազգային խառնվածքին: Դա մեր մարդու հոգու բովանդակ խորությունն է, ուրախության և ցավի բանաստեղծությունը, մեր սոցիալական կնճռապատ կյանքի և քաղաքական տառապանքի պատմությունը...»* (Թամրազյան, 1986, էջ 94):

«Մի կաթիլ մեղրը»-ում (1909) զուտ պատահականությամբ գետնին ընկած մի կաթիլ մեղրի վրա ճանճ է նստում, ինչն էլ դառնում է ապագա ողբերգական դեպքերի դրդապատճառը: Խանութպանի կատուն թաթով իսկույն սպանում է ճանճին, իսկ մեղր գնելու եկած հարևան գյուղացու շունը խեղդում է կատվին՝ նոր ընդհարումների համար իրական հիմք ստեղծելով: Դեպքերն ու իրադարձությունները անսպասելի զարգացում են ունենում: Խանութպանը սպանում է շանը, շան տերը՝ խանութպանին, որից հետո հարևան երկու գյուղերի բնակիչները անգիտակցաբար միմյանց են կոտորում՝ բացարձակապես չխորանալով հարցի էության մեջ: Այնուհետև շղթայական ռեակցիայով երկու հարևան պետություններն են միմյանց ձեռնոց նետում ու պատերազմ սկսում: Խոսքի անգերազանցելի վարպետը մանրազնին քննել է մարդ արարածի վարքագիծը, որը, նեղանձնական շահագրգռվածության պատճառով, չարաբաստիկ աղետի պատճառ է դառնում: Իրենց տգիտությունն ու անզուսպ կիրքը թաքցնելու պատրվակով երկու երկրների թագավորները, խաղաղության անվան տակ քողարկվելով, միմյանց հասցեին մեղադրանքներ են հնչեցնում. *«Մեր դրացի ազգը դավաճան//Մեր սահմանը մրտավ զոռով,//Ու կոտորեց սուրը ձեռքին//մեր սիրելի զավակներին», «Հանուն թափված անմեղ արյան//Հանուն ազատ մեր աշխարհքի,// Հանուն Ապրծու և իր փառքի-//Բարձրացնում ենք մեր ձայնն ահա//Ու մեր սուրև նորա վրրա»* (Թամրազյան, 1986, էջ 168-169)՝ դառնալով աղետաբեր պատերազմի հրձիգներ: Ձավեշտականն ու ողբերգականը մանրամասն ներկայացնելուն

զուգահեռ՝ բանաստեղծը խստորեն մերժում է պատերազմ հրահրողներին՝ նրանց պատկերելով ցավի ու ծիծաղի ներդաշնակ միաձուլմամբ: Նա միանշանակ ծաղրում է մարդ արարածի հիմարությունը, չարիքի, դժբախտության և անիմաստ արյունահեղության պատճառ դառնալու նրա անզուսպ կիրքը, որից երբեք հետևություններ չի անում, որովհետև պատերազմի հրձիգների համար մարդկային կյանքը բացարձակապես արժեք չուներ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ երկու երկրների թագավորները, միմյանց հերթ չտալով, նույն հռետորաբանությամբ կրկնում են միմյանց՝ մեծամտորեն խոսելով արդարության ու խաղաղության մասին, սակայն նույն պահին չեն զլանում միմյանց մեղադրել պատվիրաններն անտեսելու և ոտնակոխ տալու համար և զենքի դիմելու կոչեր են հնչեցնում: Բանաստեղծը հավատացած էր, որ պատերազմը չարիք է ծնում ու տարածում, ուստի անխնա խարազանում է պատերազմի հրձիգներին, ովքեր չնչին պատրվակով անհեթեթ կռիվ են սկսում՝ բարության մասին մոռանալով: Խոսելով չարիքին ծնունդ տվող մարդկային արատի՝ ագահության մասին, նա վստահորեն հանգում է անքննելի եզրակացության՝ պատերազմից երբեք հաղթողներ չեն դառնում, որովհետև մարդկային կյանքը հաղթանակների և պարտությունների անվերջանալի շղթա է, և մի գեղեցիկ օր ամենքն էլ ստիպված են հաշտվել պարտության մտքի հետ: Եվ քանի որ մարդն ինքն է կերտում ապագա սերունդների ճակատագիրը, ուրեմն պարտավոր է խելամտորեն և կշռադատված մոտենալ կենսական այդ խնդրին: Գրական մշակման ենթարկելով առակը՝ Թումանյանն ինքնատիպ ընդհանրացման է հասել՝ բովանդակությունը հարստացնելու նպատակով ներառելով նոր մոտիվներ ու կերպարներ:

Այս ստեղծագործությամբ չարագործ գահակալներին ծաղրելու զուգահեռ թումանյանական պատգամը հստակ ուղղված է բոլոր ժամանակներում պատերազմ սանձազերծողներին, որոնց համար կարևորն առաջին հերթին սեփական շահն էր ու բարեկեցությունը, ինչը նաև չափազանց խիստ զգուշացնում է արհավիրքի կործանարար հետևանքների մասին: Ներկայացնելով ականատեսների միանգամայն օրինաչափ անհանգստությունը, բանաստեղծը մեղմ հումորով եզրափակում է ասելիքը. *«Իսկ մնացած մարդիկ իրար // Հարցնում էին սարսափահար,//Թե ո՞ւրտեղից արդյոք ծագեց//Էս ընդհանուր աղետը մեծ»* (Թամրազյան, 1986, էջ 169): Կյանքի աններդաշնակությունը վերացնելու միակ և հուսալի երաշխիքը չարիքը գտնելն ու այն վերացնելը, արմատախիլ անելն է՝ սա է թումանյանական պատգամը: Հենց այստեղ են հանգուցալուծվում մարդկանց ճակատագրերի շուրջբոլորը կատարվող անհասկանալի և ոչնչով չարդարացվող անցուդարձերից ու հոգու խռովքից ծնված նրա խոհերն ու մտորումները, որոնցից էլ սկիզբ են առնում բանաստեղծի սթափ մտքի թռիչքն ու ընդվզումը մարդկային տարատեսակ անարդարությունների դեմ: Այդ նկատառումով էլ կյանքի ճշմարտությունը բացահայտելով իր ստեղծագործական վառ անհատականության շնորհիվ և մարդուն որպես գրական հերոս ներկայացնելով վեր է հանում և ի ցույց դնում նրա արժանիքները՝ դրանով իսկ գրականություն մուտքագրելով մարդու իդեալն ու մարդկայինը՝ ժողովրդի միասնության գաղափարը:

«Պոետն ու մուսան» (1906) երգիծական պոեմում Թումանյանը նրբանկատորեն հակադրության մեջ է դրել մարդկային ձգտումներն ու շրջապատը: Երկխոսությամբ գրված ստեղծագործությունը յուրատեսակ բանավեճ է պոետի և մուսայի միջև, որոնց գեղագիտական ընկալումները բացահայտորեն տարբերվում են, իսկ ծագած բանավեճի միջոցով մանրամասն և ամբողջությամբ բացահայտվում է նրանցից յուրաքանչյուրի էությունը: Պոետը, որի կոչումը ի սկզբանե ճշմարտությանը և արդարությանը ծառայելն է, ստեղծագործական աշխատանքը հնարամտորեն զուգակցում է պաշտոնների հետ, այն գիտակցաբար ծառայեցնում փողի իշխանությանը՝ դառնալով կեղծիքն ու սուտը մշտապես և գիտակցաբար փառաբանող սովորական գրչակ: Հենց այս հողի վրա էլ տեղի է ունենում նրա և մուսայի ընդհարումը: Աստվածատուր պարգև մուսան ոչ մի կերպ չի հաշտվում այն մտքի հետ, որ հանգամանքների խոնարհ ծառա և հլու-հնազանդ կամակատար դարձած պոետը չարամտորեն պատեհ առիթը երբեք ձեռքից բաց չի թողնում՝ զարտուղի ճանապարհներին նախապատվություն տալու համար՝ գիտակցաբար մոռանալով, որ իր առաքելությունը ժողովրդին և արդարությանը ծառայելն է: Վերջինս չի թաքցնում իր դժգոհությունը և մեղադրում է մուսային. *«Անիծված լինի էն օրն ու կարին,//Որ գերի դառա ես քո քընարին.//Քեզ հետ մը-տերիմ դառնալու օրից//Զրկված մընացի կյանքում բոլորից...»* (Թամրազյան, 1986, էջ 132): Վեճը գնալով սաստկանում է, պոետը զանազան փաստարկներով փորձում է արդարացնել իր քայլերը, ինչից հետո նրանք գժտվում են, որովհետև վերջնարդյունքում հերոսի անկեղծ ինքնախոստովանությունը լիովին բացահայտում է նրա էությունը: Նա ինքնակամ հրաժարվում է «գրողի պսակից», որովհետև նրա համար կյանքում արդեն աստվածատուր տաղանդը ժողովրդին ծառայեցնելը անկարևոր էր, վերջնականապես համոզվել էր, որ իր կյանքի նպատակը գայթակղիչ փողի քսակի մոլեռանդ երկրպագու դառնալն էր, քանզի հավատացած ու համոզված էր. *«Թրքում եմ քեզ և քո պըսակին,//Երկըրպագում եմ փողի քըսակին:// Փողի քըսա~կը, փողի քըսա~կը,//Բարձրացընում է մարդու հասակը»* (Թամրազյան, 1986, էջ 143):

Թումանյանական երգիծանքի բարձրակետը պոետի ոչնչով չարդարացվող ներբողն է, որն ավարտելուց հետո նա անթաքույց ծիծաղով բաժանվում է իր անցյալից՝ վերջնականապես հրաժարվելով նաև պայքարել կյանքի խորթ երևույթների դեմ, որոնց մոլի երկրպագուն էր դարձել ինքնակամ: Դրամատիզմով լեցուն պոեմում պոետը մուսային պատմում է իր կյանքի առանձին դրվագներ, որոնք կազմում են սյուժետային որոշակի ընթացք, ինչպես նաև երգիծանքով վերարտադրում իրական փաստեր՝ ավելի հստակ և ամբողջական դարձնելով բանաստեղծի անհիմն դժգոհությունն իր իսկ կոչումից, որը իբր դարձել էր ծաղր ու ծանակի առարկա: Համբերությամբ զինված մուսան մինչև վերջ համակ ուշադրությամբ լսում է նրա միանգամայն շինծու, անհիմն և ոչնչով չարդարացվող դժգոհությունն ու փողապաշտ դարձածին լրջորեն հորդորում է կյանքում անկեղծ ապրել: Թումանյանական երգիծանքն այս պոեմում ունի չափազանց դրամատիկական և ողբերգական շերտեր, որոնց օգնությամբ բացահայտվում են պոետի էության սնանկու-

թյունը, որովհետև պոետական նրա ձևակերպումը ոչ միայն փողի ամենակարող ուժի ներբող է, այլև նրա իրական և կեղծարար ազդեցության արդարացված ձաղկումը, քանզի ծախու գրչակները բոլոր ժամանակներում այլ կերպ չեն կարող ապրել և հասարակության մեջ տեղ չպետք է ունենան ու մշտապես պարսավանքի պիտի ենթարկվեն:

«Թագավորն ու չարչին» (1917) պոեմի սյուժեն ծառայում է բանաստեղծի ապրած հարափոփոխ ժամանակի յուրովի իմաստավորմանը, որովհետև գործողությունները տեղի են ունենում իրական ժամանակում և իրական հանգամանքներում: Ծպտյալ վաճառականի տեսքով հայ գյուղացիներ հետ նպատակային հանդիպման եկած պարսից շահը շնորհակալական ու երախտիքի խոսքեր լսելու փոխարեն միմիայն անեծքներ է լսում իրեն ուղղված՝ *«–Ամա~ն, հողեմ գլուխը Շահի,//Ասված Շահից հեռու պահի»* (Թումանյան, 1995, էջ186), *«Անե~ծք Շահին ու իր գահին»* (Թումանյան, 1995, էջ 187): Անամոք կարոտով իրենց հայրենիքից բռնի ուժով տեղահանված հայ գյուղացիները ոչ մի կերպ չէին կարողանում համակերպվել օտար միջավայրում ապրելու մտքի հետ: Երբ չարչու կերպարանքով հայտնվածը ցանկանում է հստակեցնել, թե նրանք ինչո՞ւ են շահի ներկայությամբ միմիայն օրհնանքի խոսքեր հնչեցնում, զրուցակիցներն ազնվորեն խոտովանում են, որ վախենում են մարդակեր գազանից: Ի վերջ ճշմարտությունը լիովին բարձրաձայնած դժբախտ ծերունին սպանվում է՝ շահի դիմակը պատռելու և ժողովրդի ճշմարտացի կարծիքը բարձրաձայնելու պատճառով: Քննելով **«Թագավորն ու չարչին»** պոեմի կենսական աղբյուրները և պատմական նյութը գեղարվեստական ճշմարտության վերածելու բանաստեղծի վարպետությունը գնահատելուն զուգահեռ Ջ. Ավետիսյանը նկատում է. *«Այս առումով հեգրաքրքրական է «Թագավորն ու չարչին» երկը, որի մեջ բանաստեղծը զարմանալի վարպետությամբ կարողացել է գեղարվեստորեն խրացնել պատմական ճշմարտությունը՝ առանց նրա հավաստիությունը խախտելու»* (Ավետիսյան, 1973, էջ 64–65): Այս ստեղծագործության հիմնական գաղափարը ճշմարտության և կեղծիքի հակադրությունն է: Ակնհայտ է, որ Թումանյանի ստեղծագործական երևակայությունն իրատեսական է, որովհետև նա իր անվերջ փոթորկվող հոգու աշխարհի միջոցով ճշմարտությունն է բարձրաձայնում անգամ երգիծանքի օգնությամբ և մարդկանց մատուցում, որպեսզի անտես խավարում անգամ նրանք կարողանան ճիշտն ու սխալը միմյանցից զանազանել:

Թումանյանը յուրովի տեսավ, ընկալեց և չափածո ստեղծագործություններում մարմնավորեց մարդկանց ազգային և սոցիալական խնդիրները: Նա բացառիկ վարպետությամբ է իրականացրել ցանկացած կերպարի բնութագրումը՝ ստեղծագործական երևակայության շնորհիվ մարդկանց արարքների, գործողությունների և դեպքերի միաձույլ ու ամբողջական շղթայում ճշմարտացիորեն վերարտադրելով իրականության ռեալ պատկերը: Ստեղծագործելու ընթացքում բանաստեղծը իր առջև դրած խնդիրն անսխալ է լուծում, որովհետև, ինչպես նկատում է Էդ. Ջրբաշյանը. *«Թումանյանը ձգտում է ժողովրդի կյանքն ընդգրկել իր բոլոր տարրերի, բանաստեղծական և ողբերգական կողմերի միասնության մեջ: Նրա կերտած պատկերները մեծագույն ուժ*

և փարողություն են ձեռք բերում, խլացնելով ժողովրդի դարավոր կենսափորձն ու ներկայի էական գծերը» (Զրբաշյան, 1973, էջ 97): Հավատացած և համոզված լինելով, որ կյանքում ցանկացած երևույթ իր օրինաչափ ավարտն ունի, ոչինչ հավերժական չի կարող գոյատևել, նա հանգույցից հետո նրբանկատորեն սկսում է գործողության բնական ու աստիճանական զարգացումը և այն վարպետորեն հասցնում ցանկալի վերջնագծին: Այդ ընթացքում, սյուժեի զարգացմանը զուգահեռ, ներդաշնակորեն լուծում է նաև ծնունդ առած հակադրությունը **(«Շունն ու կատուն», «Չարի վերջը», «Անիծած հարսը»):** Մարդկային արատներն ու բացասական գծերը ակնհայտ ծիծաղ առաջացնելու նպատակով նա երբեմն պայմանական պատկերներ է ստեղծում, որոնք ուղղակի իմաստով հասկանալ պետք չէ **(«Անիծած հարսը»)**: Առանձին հերոսների դիմում է մեղմ հումորով, երբեմն անթաքույց կարեկցանքով, ինչպես նաև բացահայտ ծիծաղով ու սարկազմով՝ կյանքը ներկայացնելով ճշմարտացի գույներով **(«Թագավորն ու չարչին», «Շունն ու կատուն», «Մի կաթիլ մեղրը»)**: Եվ քանի որ իրական կյանքը հակադրությունների բնական ու շարունակական պայքար և անզիջում մրցավազք է, սյուժեի զարգացումը տեղի է ունենում տեսանելի հակադրությունների հաղթահարման արդարացված ուղիով: Իր նպատակին հետամուտ՝ բանաստեղծը իր կերտած կերպարի միջոցով իրավացիորեն մերժում է այն ամենը, ինչ անհարիր է բարոյական ընկալմանը **(«Պոետն ու մուսան», «Թագավորն ու չարչին», «Մի կաթիլ մեղրը»):** Նա միանգամայն բացառիկ վարպետությամբ է ստեղծում կատարյալ ծաղրական իրավիճակ՝ բացահայտելով հերոսի մտածողության սնանկությունը **(«Պոետն ու մուսան»):** Միանգամայն օրինաչափ է, որ բանաստեղծի սուր աչքից աննշան մանրուքն անգամ չի վրիպում: Նա արդարամտորեն կյանքը պատկերում է միանգամայն օբյեկտիվորեն՝ բացահայտելով կյանքի իրական գծերն ու կերպարների հոգեբանությունը, ինչի շնորհիվ նրա ստեղծած լավագույն երկերը, ազգայինին զուգահեռ, համամարդկային մշակույթի անբաժանելի մասն են կազմում:

Թումանյանի գեղարվեստական խոսքն առանձնանում է ինքնատիպ և հետաքրքիր լուծումներով, պատկերավորման բացառիկությամբ ու խոհականությամբ: Նա գրչի նուրբ հարվածով կերտում է անկրկնելի պատկերներ և բացառիկ կերպարներ, որոնք իրապես չափազանց պարզ են, անմիջական, խոսուն և իմաստալից, որովհետև պատկերային մտածողության շնորհիվ բացահայտվում են կյանքի դրական ու բացասական կողմերը, ինչպես նաև հասարակական-գեղագիտական իդեալի դիրքերից դատապարտվում և ժխտվում են արատավոր երևույթները՝ տարբեր երանգներով թերությունների ակնհայտ մերժումից մինչև ոչնչացվող ծաղր՝ համեմված խոսքի կոմիզմի անկրկնելի նմուշներով: *«Ամենահրաշապատում երևացող անցքին էլ Թումանյանն այն աստիճան բնական և ինքնատիպ է ցուցադրում, որ ընթերցողն ընկալում է դրանք որպես միանգամայն և իրական հանգամանքներ և բնավորություններ: Հեղինակի վառ և կենսալի երևակայությունը իրար է ձուլում իրական և ֆանտաստիկ աշխարհի պատկերները և գերբնականն էլ հաճախ դրսևորում է իրական գույներով ու շերտերով: Դրա համար էլ ժողովր-*

դական բանահյուսության հինավուրց ավանդույթները Թումանյանի գործերում նոր կյանք ու իմաստ են ստանում» (Թումանյան, 1964, էջ 205): Կերպարի զավեշտական և ծաղրանկարային պատկերման ընթացքում մեկ մարդու հատկությունը նա վարպետորեն պատկերում է չափազանցությամբ, բացի այդ, ներկայացվող երևույթները կարողանում է արտահայտել չափազանց պարզ և ընթերցողին միագամայն հասկանալի և ընկալելի, ինչը իր ինքնատիպությամբ ոչ միայն ծիծաղ է առաջացնում, այլև խորհելու առիթ է դառնում: Վարպետորեն օգտագործելով կերպարավորման զանազան միջոցները՝ կենդանի երկխոսություններով ու մենախոսություններով կանխամտածված գեղարվեստական պատկերման և լեզվամտածողության տարատեսակ սկզբունքների է դիմում տպավորությունն ազդեցիկ դարձնելու մտադրությամբ: Առօրյան պատկերող թումանյանական ճշգրտությունը, խոսքի դինամիկան, հակիրճությունը, սեղմությունը և փաստի հավաստիությունը ընթերցողին ակամա դարձնում են դեպքերի հաղորդակից:

Եզրակացություն

Թումանյանի վերոհիշյալ ստեղծագործությունների հերոսներից յուրաքանչյուրը ինքնատիպ անհատ է՝ բնավորության առանձնահատուկ գծերով և հոգեկան ներքին ապրումներով, տարբեր իրավիճակներում սեփական ինքնատիպ, ինչ-որ տեղ նաև չարդարացված կողմնորոշմամբ ու կայացրած որոշմամբ: Նման դեպքերում բանաստեղծի հումորը իրապես իմաստալից և չափազանց բազմախորհուրդ է, որովհետև նա կարողանում է նրբանկատորեն բացահայտել հերոսների սնամեջ ներաշխարհը և մտածողության սնանկությունը: Ահա հենց նման պահերին է հստակ ուրվագծվում ստեղծագործող անհատականության անտեսանելի, առերևույթ բացակա, սակայն իրականում հերոսների անբաժան ուղեկից և մշտապես ներկա նրա կերպարը:

Թումանյանին մշտապես մտահոգել է հանրության մեջ առկա և անգամ անզեն աչքով տեսանելի միջակության գոյությունը: Գտնելով, որ բացարձակ ճշմարտությունը պետք է ընդունել որպես համոզմունք, նա կարողանում է չարին, ստին ու կեղծիքին համարժեք և սպառիչ պատասխան տալ: Միգուցե ինչ-որ տեղ բացարձակ անկեղծությունն ու ճշմարտությունները խենթության նշաններ են, սակայն բանաստեղծն ունի այս հարցի հստակ պատասխանը՝ բառը պետք է գժվի, որ միտք դառնա:

Երգիծանքի դիմելով՝ Թումանյանը գաղափարական մի նպատակ է հետապնդում՝ մերկացնել կյանքի բացասական և ստվերոտ կողմերը, ծիծաղի միջոցով և նրա օգնությամբ վեր հանել շրջապատի արատավոր երևույթները, խոսքի և գործի հակասականության տակ թաքնված սնամեջությունը: Նա իրեն բնորոշ սրամտությամբ կյանքի ցավալի արատներից ձերբազատվելու խնդիրը լուծում է երևույթը ծաղրելով՝ կանխամտածված նրան ինչ-որ արժանիք վերագրելով, սարկազմով՝ արգահատելի քայլերին ու արարքներին բացասական գնահատական տալով, ինչպես նաև գրոտեսկով՝ իրականությունը, երբեմն ֆանտաստիկ գույներով ներկայացնելով: Ժխտելով պատկերվող իրականությունը և երբևէ չթաքցնելով իր անհաշտ վերաբերմունքը՝ վերջինս անն-

կատ ու հնարամտորեն փոխանցում է ընթերցողին՝ փորձելով հումորի օգնությամբ մարդուն ազատել ցավալի և արատավոր երևույթներից: Նպատակ ունենալով վեր հանել չարի և բարու հակադրությունը՝ Թումանյանն իր համակրանքը, հակակրանքը, մտահոգությունն ու չթաքցվող ցավն արտահայտում է իրատեսորեն ու այն աննկատ փոխանցում ընթերցողին

Օգտագործված գրականության ցանկ

Ավետիսյան, Ջ. (1973). *«Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան»,* ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
Երևան:

Զաքարյան, Ա. (1981). *«Ավանդների ուժը»,* «Սովետական գրող» հրատ., Երևան:

Թամրազյան, Հ. (1986). *«Բանաստեղծության հազարամյա խորհուրդը»,* «Սովետական գրող» հրատ., Երևան:

Թումանյան, Հ. (1995). *Երկերի լիակատար ժողովածու,* հատոր 7, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան:

Թումանյան, Հ. (2018). *Երկերի լիակատար ժողովածու,* հատոր 2, Երևան:

Թումանյան, Հ. (1964). *«Ուսումնասիրություններ և հրապարակումներ»,* հատոր 1, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:

Ինճիկյան, Ա. (1967). *«Մտերիմներ և մտորումներ»,* «Հայաստան» հրատ. Երևան:

Ջրբաշյան, Էդ. (1973). *«Գրական ժանրեր. Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը»,* ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան:

Սարգսյան Խ. (1966). *«Տասնամյակներին միջով»,* «Հայաստան» հրատ., Երևան:

Ани Казарян

Научный сотрудник Института литературы им. М. Абегяна
Национальной академии наук Республики Армения,
кандидат филологических наук
Эл. адрес: arpinanyan21@gmail.com

ОСОБЕННОСТИ САТИРЫ В ПОЭЗИИ ОВАНЕСА ТУМАНЯНА

Статья посвящена особенностям сатиры в стихотворных произведениях О. Туманяна (поэмах, легендах, балладах) и художественным приёмам, использованным поэтом, где оправданный гнев и самоуничижение автора выражаются схожим образом, путём слияния воображаемого и реального.

Цель работы – раскрыть психологическую характеристику персонажей через анализ этих произведений и образного строя писателя, а проблема – жанровую принадлежность сатирических произведений. Предметом нашего исследования являются сатирические произведения в стихах, а методом – методы сравнительного и структурного анализа, с помощью которых одновременно проводятся сравнения и параллели. С помощью сравнительно-типологического анализа показаны особенности сатиры Туманяна, раскрывающие исключительную индивидуальность автора. Научная новизна

заключается в раскрытии сатирических приёмов, использованных поэтом, и противопоставления добра и зла.

Ключевые слова: поэт, образ, стих, баллада, полет фантазии, истинный творец, правда жизни, творчество.

Ani Ghazaryan
Researcher at the Institute of Literature named after M. Abeghyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Ph.D. in Philology
Email: arpinanyan21@gmail.com

FEATURES OF SATIRE IN HOVHANNES TUMANYAN'S POETRY

The article is devoted to the features of satire in the poetic works of O. Tumanyan (poems, legends, ballads) and artistic techniques used by the poet, where the author's justified anger and self-abasement are expressed in a similar way, by merging the imaginary and the real.

The purpose of the article is to reveal the psychological characteristics of the characters through the analysis of these works and the writer's figurative structure, and the problem is the genre affiliation of satirical works. The subject of our study is satirical works in verse, and the method is the methods of comparative and structural analysis, with the help of which comparisons and parallels are simultaneously made. With the help of comparative-typological analysis, the features of Tumanyan's satire are shown, revealing the exceptional individuality of the author. Scientific novelty lies in the disclosure of the satirical techniques used by the poet and the opposition of good and evil.

Key words: poet, image, verse, ballad, artistic image, true creator, truth of life, creativity.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. սեպտեմբերի 2-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. սեպտեմբերի 10-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: